Ընդունված է՝
Կոլեգիալ կառավարման
խորհրդի նիստին
արձանագր. Թիվ 1

02 02 2017 թ.

Հաստատում եմ՝
ԱԱՊՔ տնօրեն

Ն.Ա.Մուրադյան

02 02 2017 թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

<<Արմավիրի արվեստի պետական քոլեջ>> ՊՈԱԿ-ի

Մանկավարժական խորհրդի

1 Ընդհանուր դրույթներ

- ԱԱՊՔ-ի Մանկավարժական խորհուրդ /այսուհետ՝ խորհուրդ/ ստեղծվում է ուսումնադաստիարակչական գործունեության կառավարման մեջ կոլեգիալ սկզբունքները պահպանման ու զարգացման, ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանավորման և համակարգման նպատակով:

- Մանկավարժական խորհուրդը կազմակերպում է իր աշխատանքը սերտ համագործակցելով քոլեջի վարչական աշխատողների հետ :

- Մանկավարժական խորհրդի լիազորությունների սահմաններում ընդունված որոշումը, պարտադիր է քոլեջի կոլեկտիվի յուրաքանչյուր անդամի համար:

2 Մանկավարժական խորհրդի գործունեության հիմնական ուղղությունները

- **Քննարկում է** մանկավարժների զեկույցները, մանկավարժական անձնակազմի աշխատանքի արդյունքները, սովորողներին հաջորդ կուրս փոխադրելու և ավարտելու, պարգևատրելու և խրախուսելու, օրենքով սահմանված կարգով սովորողի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու մասին , ինչպես նաև քոլեջից հեռացնելու հարցերը:
- **Մշակում է** քոլեջի զարգացման ծրագիրը , կարգապահական կանոնները , մանկավարժական խորհրդի, ուս.խորհրդի կանոնակարգերը և քոլեջի վերաբերվող այլ կանոնակարգեր և ներկայացնում է այն կոլեգիալ կառավարման խորհրդի քննարկմանը
- **Մշակում է** մանկավարժական խորհրդի կիսամյակային և քոլեջի տարեկան աշխատանքային պլանները

- Պարբերաբար վերանայում և քննարկում է ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունքները
- Քննարկում է միջին մասնագիտական պետական չափորոշչին համապատասխան հանրակրթական , մասնագիտական հիմնական ծրագրերի իրագործման հարցերը՝ սովորողների հակումներին ու ընդունակություններին նրանց կյանքի և առողջության պահպանմանը համապատասխան :
- Քննարկում է ուսուցման բովանդակության, ուսանողների ուսումնառության որակի, նրանց հետ տարվող տարբեր միջոցառումների կազմակերպման հարցերը.
- Քննարկում և կազմում է միջին մասնագիտական պետական կրթական չափորոշչի մոդուլային ծրագրերի, ուսումնական պլանների նախագծերը
- Քննարկում է քոլեջում կրթական գործընթացին օժանդակող խորհրդատվական (տեղեկատվական, հոգեբանական, սոցիալ-մանկավարժական, հատուկ մանկավարժական, մեթոդական, առողջապահական և այլ բնույթի) ծառայություններ մատուցելու հարցը. և ուսումնական գործընթացին վերաբերող այլ հարցեր:

3 Մանկավարժական խորհրդի և նրա անդամների ձևավորման կարգը

- Մանկավարժական խորհրդի աշխատանքը կազմակերպում և ղեկավարում է քոլեջի տնօրենը (տնօրենի պաշտոնակատարը), ով ի պաշտոնե մանկավարժական խորհրդի նախագահն է:
- Մանկավարժական խորհրդի կազմի մեջ են մտնում քոլեջի տնօրենը, նրա տեղակալները, առարկայական ցիկլերի հանձնաժողովի նախագահները, քարտուղարը ,պրակտիկայի վարիչը, ինչպես նաև քոլեջի մանկավարժները և նվագակցողները:
- Մանկավարժական խորհրդի կազմը ձևավորվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա մինչև սեպտեմբերի 10-ը: Մանկավարժական խորհրդի անդամների անվանական կազմը հաստատում է տնօրենը:
- Մանկավարժական խորհրդի նիստերը բաց են:
- Անհրաժեշտության դեպքում մանկավարժական խորհրդի նիստերին, խորհրդակցական ձայնի իրավունքով, հրավիրվում են՝ մանկ. խորհրդի կազմում չընդգրկված մանկավարժներին , ուսանողական խորհրդի ներկայացուցիչներին և այլ անձինք: Մանկավարժական խորհրդի անդամները հավասար իրավունքներ ունեն: Որոշումներն ընդունվում են ձայների մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ: Մանկավարժական խորհրդի նիստերն արձանագրում է անդամներից ընտրված քարտուղարը :Որոշումները գրանցվում են խորհրդի նիստերի արձանագրություններում: Խորհիդր նիստերը Ուսումնական տարվա ընթացքում անց է կացվում երկու ամիսը մեկ անգամ՝ քոլեջի ուսումնադասատիարակչական պլանի համաձայն, անհրաժեշտությունից ելնելով կարող է կազմակերպել արտահերթ նիստ:
- Մանկավարժական խորհրդի նիստը իրավազոր է, եթե դրան մասնակցում են մանկավարժական խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին:

Որոշումներն ընդունվում են քվեարկությանը մասնակցած մանկավարժական խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ:

- Մանկավարժական խորհրդի որոշումների կատարումը ապահովում է քոլեջի տնօրենը և պարբերաբար զեկուցում է քոլեջի կառավարման խորհրդին՝ արդյունքների մասին: